**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2**

**«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԱԾՁԲ-24/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան 02 հուլիսի 2024թ.

ժամը 12:30

Մասնակցում էին՝

Նախագահ՝ Տարոն Վարդանյան

Բացող անդամներ՝ Սեդրակ Կիրակոսյան, Հայկ Հովհաննիսյան

Գնահատող անդամներ՝ Լարիսա Առաքելյան, Տաթևիկ Պալոյան

Քարտուղար՝ Նելլի Աբովյան

**1. «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԱԾՁԲ-24/1» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման, հայտերով ներկայացրած փաստաթղթերի առկայության, գնային առաջարկների համեմատման և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների ծանուցման մասին.**

**1.1** Հայտ ներկայացնելու մասին՝ 29.05.2024թ. գնման ընթացակարգ է հրապարակվել www.armeps.am կայքում, ինչպես նաև հրավերը հրապարակվել է www. gnumner.am պաշտոնական կայքում:

**1.2** Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացվել են 2024 թվականի հուլիսի 01-ին, ժամը՝ 12:00-ին www.armeps.am կայքի միջոցով:

**1.3** Գնման հայտով սահմանված գնման առարկաների քանակը և գինը.

| Չափաբաժնի h/h | Անվանումը | Հաստատված քանակը | Ծ |
|---|---|---|---|
| 1 | ՀՀ ԱՆ Աբովյան ՔԿՀ-ում մասնաշենքի վերակառուցման, վերանորոգման, տարանջատող պարիսպների կառուցման և բակի բարեկարգման համար անհրաժեշտ շինարարական աշխատանքներ | 1 | 477178920 |

**2. Բաց մրցույթին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.**

2.1 « **ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԱԾՁԲ-24/1**» ծածկագրով հայտարարված բաց մրցույթին մասնակցել է թվով 4 մասնակից.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Էլ. հասցե | ՀՎՀՀ | Հասցե | Հեռ. |
|---|---|---|---|---|---|
| 1. | «Վրեժ» ՍՊԸ և «ԳՐԱՖՇԻՆ» ՍՊԸ /կոնսորցիումով հանդես եկող/ | Vrezhspy@mail.ru, Lina_786@mail.ru | 00802157, 05552376 | Ք. Երևան, Գայի պողոտա 5/5, Ք. Արթիկ, Շինարարների փող. 5/38 | 077-18-99-99, 099-99-94-74 |
|  | «ՊՐՈ ՇԻՆ»ՍՊԸ և | proshingnumner@mail.ru, | 02261135 | Ք. Երևան, Հրաչյա | 093-02-34-01, |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2. | «Բիլդինգ Կոնստրուկշն» ՍՊԸ /կոնսորցիումով հանդես եկող/ | levondavtyan0110@gmail.com | 02291871 | Քոչար փ. 2/1, Ք. Երևան, Ներքին Շենգավիթ 1-ին փ. 1/1 | 097-73-32-70 |
| 3. | «Վի Քեյ Գրուպ» ՍՊԸ | Vkgroup2021@mail.ru | 0132947 | Ք. Հրազդան, Մաքրավան, Հյուսիս-Արևմտյան թ. | 091-17-94-17, 099-33-33-05 |
| 4. | «Արմատ Քոնսթրաքշն» ՓԲԸ | m.hakobjanyan@kapavor.am | 02315582 | Ք. Երևան, Ն. Շենգավիթ 11փ., 1/252 | 041-22-18-18 |

**3.Բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերի առկայությունը և դրանց համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին**

3.1 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԱՇՁԲ-24/1» ծածկագրով ԲՄ էլեկտրոնային ձևով կազմակերպված ընթացակարգի Մասնակիցներ «Վրեժ» և «ԳՐԱՖՇԻՆ» ՍՊԸ-ների /կոնսորցիումով հանդես եկող/, «ՊՐՈ ՇԻՆ» և «Բիլդինգ Կոնստրուկշն» ՍՊԸ-ների /կոնսորցիումով հանդես եկող/, «Վի Քեյ Գրուպ» ՍՊԸ-ի, «Արմատ Քոնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկները ներկայացվել են ԱԱՀ-ն ներառյալ:

3.2 ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար ՀՀ ԱՆ Աբովյան ՔԿՀ-ում մասնաշենքի վերակառուցման, վերանորոգման, տարանջատող պարիսպների կառուցման և բակի բարեկարգման համար անհրաժեշտ շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով, բաց մրցույթի միջոցով, էլեկտրոնային ձևով կազմակերպված «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԱՇՁԲ-24/1» ծածկագրով ընթացակարգի գնահատման ընթացքում հանձնաժողովը որոշեց՝ Մասնակից «Արմատ Քոնսթրաքշն» ՓԲԸ-ի գնման հայտը, ըստ նախնական տվյալների, /փաստաթղթերի առկայությամբ/ գնահատել բավարար, իսկ «Վի Քեյ Գրուպ» ՍՊԸ-ի գնման հայտը գնահատել անբավարար և մերժել, քանի «Վի Քեյ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման 5-րդ կետում երաշխիքի գործողության ժամկետը Հրավերով նախատեսված 120 /մեկ հարյուր քսան/ աշխատանքային օրվա փոխարեն նշված է 90 /իննսուն/ աշխատանքային օր, և, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայտի ապահովումը չունի շտկման հնարավորություն, հանձնաժողովը որոշեց «Վի Քեյ Գրուպ» ՍՊԸ-ի գնման հայտը գնահատել անբավարար և մերժել:

3.3 Մասնակիցներ «ՊՐՈ ՇԻՆ» և «Բիլդինգ Կոնստրուկշն» ՍՊԸ-ների /կոնսորցիումով հանդես եկող/ և «Վրեժ» և «ԳՐԱՖՇԻՆ» ՍՊԸ-ների /կոնսորցիումով հանդես եկող/ փաստաթղթերում արձանագրվել են Հրավերով սահմանված պահանջների անհամապատասխանություններ, մասնավորապես՝

- «ԳՐԱՖՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից տրված լիազորագրում գնման ընթացակարգի ծածկագիրը սխալ է նշված,
- «ՊՐՈ ՇԻՆ» և «Բիլդինգ Կոնստրուկշն» ՍՊԸ-ների կողմից ներկայացված Հրավերի Հավելված 1.1-ը ներկայացված է Հրավերին անհամապատասխան՝ Հավաստումի փոխարեն ներկայացված է սարքերի և սարքավորումների նկարագիրը:

3.4 Բավարար գնահատված Մասնակիցների կողմից առաջարկված գնային առաջարկները ներկայացվում են կից Հավելված 1-ում:

Ելնելով վերոգրյալից հանձնաժողովը որոշում կայացրեց հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 41-րդ կետի պահանջները, մեկ աշխատանքային օրով կասեցնել

գնման ընթացակարգը և Մասնակիցներ՝ «ՊՐՈ ՇԻՆ» ու «Բիլդինգ Կոնստրուկշն» ՍՊԸ-ների /կոնսորցիումով հանդես եկող/, «Վրեժ» ու «ԳՐԱՖՇԻՆ» ՍՊԸ-ների /կոնսորցիումով հանդես եկող/ տալ շտկման հնարավորություն: Նշված Մասնակիցների էլեկտրոնային փոստերին ուղարկել շտկում կատարելու մասին ծանուցում և մեկ /1/ աշխատանքային օրվա հաշվարկը կատարել ծանուցումն ուղարկելու պահից:

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել շտկման վերջնաժամկետը լրանալուց հետո՝ նույն օրվա ընթացքում:

**Հանձնաժողովի գնահատող անդամների կողմից ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:**

| | | |
|---|---|---|
| **Հանձնաժողովի նախագահ՝** | ______________ | **Տ. Վարդանյան** |
| **Քարտուղար՝** | ______________ | **Ն. Աբովյան** |
| **Գնահատող անդամներ՝** | ______________ | **Ս. Կիրակոսյան** |
| | ______________ | **Հ. Հովհաննիսյան** |
| **Բացող անդամներ՝** | ______________ | **Լ. Առաքելյան** |
| | ______________ | **Տ. Պալոյան** |

Հավելված 1

ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԱՇՁԲ-24/1 ծածկագրով գնման ընթացակարգի բավարար գնահատված Մասնակիցների գնային առաջարկներ

/ՀՀ դրամ/

| Չափաբաժին | Զբաղ. Տեղ | Չափաբաժնի անվանումը | Մասնակցի անվանումը | Պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գնման հայտով նախատեսվող գին /ՀՀ դրամ/ | Գնային առաջարկ (ՀՀ դրամ) | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Արժեք | ԱԱՀ | Գին |
| 1 | 1 | ՀՀ ԱՆ Աբովյան ՔԿՀ-ում մասնաշենքի վերակառուցման, վերանորոգման, տարանջատող պարիսպների կառուցման և բակի բարեկարգման համար անհրաժեշտ շինարարական աշխատանքներ | «Վրեժ» ՍՊԸ և «ԳՐԱՖՇԻՆ» ՍՊԸ | 477178920 | 285000000 | 57000000 | 342000000 |
| | 2 | | «ՊՐՈ ՇԻՆ»ՍՊԸ և «Բիլդինգ Կոնստրուկշն» ՍՊԸ | | 356000000 | 71200000 | 427200000 |
| | 3 | | «Արմատ Քոնսթրաքշն» ՍՊԸ | | 385575000 | 77115000 | 462690000 |